Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը՝ ԵՄ բնության վերաբերյալ հրահանգներին համապատասխան. Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը Չեխիայի Հանրապետությունում

Լենկա Տոմաշկովա
Չեխիայի Հանրապետության Բնության պահպանության գործակալություն
Կենդանիների պաշտպանության բաժին

Երևան
Սեպտեմբերի 16, 2021թ.

NATURE CONSERVATION AGENCY OF THE CZECH REPUBLIC

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը՝ կենսամիջավայրերի վերաբերյալ հրահանգին համապատասխան (Հրահանգ 92/43/ԵՏՀ)

- **ԵՄ հրահանգները հիմնականում պարտադիր բնույթ չեն կրում**. պետություններն իրենք են ընտրում այն գործիքները, որոնց միջոցով Հրահանգի դրույթներն ու նպատակները կիրարկվում են ազգային օրենսդրության մեջ:
- **Հավելված 2 կենդանա/բուսատեսակներ** (մոտ 900). դրանց կենսամիջավայրի հիմնական տարածքները սահմանված են որպես համայնքային նշանակության տարածքներ և ներառված են «Natura 2000» ցանցում: Այս տարածքներն անհրաժեշտ է կառավարել տեսակների էկոլոգիական կարիքներին համապատասխան:

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը՝ կենսամիջավայրերի վերաբերյալ հրահանգին համապատասխան (Հրահանգ 92/43/ԵՏՀ)

- **4-րդ հավելվածում նշված կենդանա/բուսատեսակներ** (400-ից ավել, այդ թվում՝ 2-րդ հավելվածում նշված շատ տեսակներ): ԵՄ տարածքում՝ տեսակների ամբողջ բնական կենսամիջավայրում, անհրաժեշտ է պաշտպանության խիստ ռեժիմ սահմանել՝ և՛ «Natura 2000»-ի մեջ ներառված տարածքներում, և՛ դրանցից դուրս:
- **5-րդ հավելվածում նշված կենդանա/բուսատեսակներ** (90-ից ավել):Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կենդանա/բուսատեսակների օգտագործումն ու պահումը/հավաքը չվնասի դրանց բարենպաստ պահպանության կարգավիճակին:

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը՝ կենսամիջավայրերի վերաբերյալ հրահանգին համապատասխան

Հատկապես անհետացման սպառնալիքի տակ գտնվող կենդանա/բուսատեսակների խիստ պաշտպանության համակարգեր (Հավելված 4), որոնցով արգելվում է՝

- վայրի բնության մեջ այդ տեսակների նմուշներին միտումնավոր բռնելը կամ սպանդի բոլոր տեսակները.
- այդ տեսակներին միտումնավոր անհանգստություն պատճառելը, մասնավորապես՝ բազմացման, աճեցման, ձմեռման և միգրացիայի փուլերում.
- վայրի բնության մեջ տեսակների ձվերի միտումնավոր ոչնչացումը կամ դրանք վերցնելը. բազմացման կամ հանգստի վայրերը վատթարացնելը կամ դրանք ոչնչացնելը:
- այդպիսի բույսերը վայրի բնության մեջ՝ իրենց բնական կենսամիջավայրում միտումնավոր պոկելը, հավաքելը, կտրելը, արմատախիլ անելը կամ ոչնչացնելը:

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը՝ կենսամիջավայրերի վերաբերյալ հրահանգին համապատասխան

Արգելք է գործում նաև հետևյալի նկատմամբ՝

- վայրի բնությունից վերցված նմուշներ պահելը, տեղափոխելը, վաճառելը կամ փոխանակելը, կամ դրանք վաճառքի կամ փոխանակման համար առաջարկելը.

- որոշակի կենդանատեսակներ և բուսատեսակներ վերցնելու, բռնելու կամ սպանդի ենթարկելու ոչ սելեկտիվ մեթոդների կիրառումը (Հավելված 5).

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը՝ կենսամիջավայրերի վերաբերյալ հրահանգին համապատասխան

Շեղումներ

- Եթե **բավարարող որևէ այլընտրանք** չկա, և շեղումը **վնասակար չէ** տվյալ տեսակի պոպուլյացիայի՝ իր բնական կենսամիջավայրում բարենպաստ պահպանության կարգավիճակի համար, ապա անդամ պետությունները կարող են դրույթներից շեղումներ թույլ տալ.
- Շեղումներ կարող են թույլատրվել որոշակի դեպքերում (օր.՝ հանրային առողջության շահերից կամ անվտանգության նկատառումներից ելնելով, հետազոտությունների, օդային անվտանգության նպատակներով, ինչպես նաև մշակաբույսերը, ընտանի կենդանիները, անտառները, ձկնորսարանները... լուրջ վնասներից զերծ պահելու համար):

Տեսակների պաշտպանությունը՝ Թռչունների վերաբերյալ հրահանգին համապատասխան (2009/147/ԵՀ)

Հավելված 1: Ոչնչացման վտանգի տակ գտնվում են մասնավորապես 194 տեսակ և ենթատեսակ: Անդամ պետությունները պետք է սահմանեն բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) դրանց գոյությունը պահպանելու, ինչպես նաև բոլոր չվող թռչունների տեսակների համար:

Վայրի բնության մեջ հանդիպող թռչունների բոլոր տեսակների պաշտպանությունը եվրոպական տարածքում:

Արգելվում է՝

- որևէ մեթոդով դրանց միտումնավոր սպանդը կամ դրանց բռնելը.
- դրանց բները և ձվերը միտումնավոր ոչնչացնելը կամ վնասելը, բները հեռացնելը.
- վայրի բնությունից դրանց ձվերը վերցնելը և այդ ձվերը պահելը՝ նույնիսկ այն դեպքում, երբ դրանք դատարկ են.
- այդ թռչուններին միտումնավոր անհանգստություն պատճառելը, մասնավորապես՝ բազմացման և աճեցման փուլերում.

Տեսակների պաշտպանությունը՝ Թռչունների վերաբերյալ հրահանգին համապատասխան (2009/147/ԵՀ)

Վայրի բնության մեջ հանդիպող թռչունների բոլոր տեսակների պաշտպանությունը եվրոպական տարածքում:

Արգելքը կիրառվում է նաև հետևյալի նկատմամբ՝

- թռչունների այն տեսակների պահումը, որոնց որսն ու բռնելն արգելված է.
- ողջ կամ սատկած թռչունների, դրանց հեշտ ճանաչելի մասերի կամ ածանցյալների վաճառքը, տեղափոխումը, դրանք պահելը և վաճառքի համար առաջարկելը

Տեսակների պաշտպանությունը՝ Թռչունների վերաբերյալ հրահանգին համապատասխան

Շեղումներ

- անդամ պետությունները կարող են դրույթներից շեղվել, եթե **բավարարող որևէ այլընտրանք** չկա
- պաշտպանության կանոններից շեղումներ կարող են թույլատրվել որոշակի դեպքերում (օր.՝ հանրային առողջության շահերից կամ անվտանգության նկատառումներից ելնելով, հետազոտությունների, օդային անվտանգության նպատակներով, ինչպես նաև մշակաբույսերը, ընտանի կենդանիները, անտառները, ձկնորսարանները... լուրջ վնասներից զերծ պահելու համար):

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը Չեխիայի Հանրապետությունում

«Բնության և լանդշաֆտների պաշտպանության մասին» թիվ 114/1992 օրենքում

տարբերակվում է տեսակների պաշտպանության 2 մոտեցում՝ ընդհանուր և հատուկ պաշտպանություն: Պաշտպանությունը տեղի է ունենում ամբողջ երկրում և ոչ միայն պաշտպանվող տարածքներում:

- **Տեսակների ընդհանուր պաշտպանություն**. բոլոր բուսատեսակներն ու կենդանատեսակները պաշտպանված են ոչնչացումից, վնասումից, հավաքումից կամ որսից, ինչը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել այդ տեսակների գոյության վտանգմանը => կենտրոնացում տեսակների ամբողջ պոպուլյացիայի վրա, և ոչ անհատական կենտրոնացում

- **Թռչունների ընդհանուր պաշտպանություն**. վերաբերում է վայրի տեսակների խմբի յուրաքանչյուր առանձին թռչունին, որը հանդիպում է Եվրոպական համագործակցության տարածքում: Ուժի մեջ է 2004թ.-ից՝ Չեխիայի Հանրապետությունում Թռչունների վերաբերյալ հրահանգի կիրարկումը:

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը Չեխիայի Հանրապետությունում

- **Տեսակների հատուկ պաշտպանություն**. հազվագյուտ, վտանգի տակ գտնվող կամ մշակութային, գիտական տեսանկյունից կարևոր կենդանա/բուսատեսակները դասակարգվում են որպես հատուկ պահպանվող տեսակներ => անհատական կենտրոնացում:
- Տեսակներն ըստ իրենց խոցելիության բաժանվում են 3 կատեգորիայի՝ վտանգված (179 տեսակ), խիստ վտանգված (294) և ծայրահեղ վտանգված (376) տեսակների՝ Հրահանգ թիվ 395/1992, 2-րդ և 3-րդ առդիրներ:
- Կենսամիջավայրերի վերաբերյալ հրահանգի **4-րդ հավելվածում տեղ գտած տեսակներ,** որոնք **դասակարգված են որպես խիստ վտանգված կամ ծայրահեղ վտանգված տեսակներ:**

Կենդանատեսակների և բուսատեսակների պաշտպանությունը Չեխիայի Հանրապետությունում

Տեսակների հատուկ պաշտպանություն

- Պաշտպանությունը վերաբերում է զարգացման բոլոր փուլերին.արգելվում է դրանք հավաքել, միտումնավոր սպանդի ենթարկել, բռնել կամ առևտրային նպատակներով օգտագործել. դրանց կենսամիջավայրը նույնպես խիստ պահպանվում է:
- Տեսակների հատուկ պաշտպանության մասով սահմանված արգելքներից ազատում կարող է թույլատրվել որոշակի դեպքերում (օր.՝ հանրային առողջության շահերից կամ անվտանգության նկատառումներից ելնելով, հետազոտությունների, օդային անվտանգության նպատակներով, ինչպես նաև մշակաբույսերը, ընտանի կենդանիները, անտառները, ձկնորսարանները լուրջ վնասներից զերծ պահելու համար...):

NATURE
CONSERVATION AGENCY
OF THE CZECH REPUBLIC

NATURE IS OUR HERITAGE AND THE FUTURE

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ԱՊԱԳԱՆ

www.nature.cz